Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

aravot daily

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

47/4143/ 15 մարտի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224

## Ջայլամային խոստումներ

Ընտրարշավն, ըստ էության, սկսված է, եւ թեկնածուները արդեն, այսպես ասած, բացել են իրենց խոստումների տոպրակները: Բայց խոստումները տարբեր ձեւի են լինում: Երբ, օրինակ, նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը խոսում է տնտեսական թեմաներով, դա ինձ համոզում է այնքանով, որ տնտեսագետը խոստանում է՝ իր քաղաքական թիմը, եթե մեծամասնություն ունենա խորհրդարանում, կիրականացնի այս օրենսդրական քայլերը: Կիրականացնի՞, թե՞ չէ, ճի՞շտ են այդ քայլերը, թե՞ սխալ՝ այլ հարց է: Համենայնդեպս, նա այդ քայլերն առաջարկում էր ոչ միայն նախընտրական շրջանում, որովհետեւ առաջին հերթին մասնագետ է ու հետո միայն՝ քաղաքական գործիչ եւ ընդդիմադիր: Նրա առաջարկներին էլ հնչող պատասխանները, որքան հասկանում եմ, չեն փայլում մասնագիտական մոտեցումներով եւ հնչում են մոտավորապես այսպես՝ «բա որ դու 90-ական թվականներին երկիր էիր քանդում» (միակ բացառությունը, թերեւս, էկոնոմիկայի փոխնախարարի երեկվա արձագանքն էր): Նաեւ այլ քաղաքական թիմերում կան տարբեր բնագավառների մասնագետներ, որոնք գործնական խոսակցություններ են վարում եւ, այսպես ասած, «թեմայի մեջ են», եւ թող ընտրողները դատեն, թե որքանով են այդ առաջարկները «խելքին մոտիկ»: Խոսքն, իհարկե, այն ընտրողների մասին է, որոնք դեռ չեն կորցրել իրենց դատողունակությունը՝ սոցիալական խնդիրների տակ կքված:

Կան խոստումներ, որոնք պարզապես օդի ցնցում են: Օրինակ՝ երբ անհատ թեկնածուն կամ «ցուցակային կուսակցականը» հայտարարում է՝ «մենք անելու ենք այնպես, որ բոլորն այս երկրում հավասար լինեն օրենքի առաջ», հաստատ իմացեք, որ նա, ըստ էության, ոչինչ չի ասել: Այդպիսի քարոզիչը կամ զբաղվում է «քաղաքական խալտուրայով», այսինքն՝ իրեն նեղություն չի տալիս ընտրություններին նախապատրաստվել, կամ էլ իսկապես ասելիք չունի:

Այլ հարց է, երբ պատգամավորության թեկնածուն կամ կուսակցությունը առաջարկում է լուծել ընտրողների կենցաղային խնդիրները: Գրեթե ցանկացած կրպակում կա մի հաստ ընդհանուր տետր, որը կոչվում է «Նիսյայի թուղթ», որը, բնականաբար, վկայում է ժողովրդի աճող բարեկեցության եւ այդ ուղղությամբ կառավարության հմուտ քայլերի մասին: Ահա ընտրությունները շատ լավ առիթ են՝ այդ թղթերը ի չիք դարձնելու: Բնականաբար, պետք է վաղօրոք հայտարարել, որ այդ շռայլ ժեստը կատարել է մեծն բարերար Այսինչյանը, որը միշտ իր ժողովրդի կողքին է եղել: Գոհ կմնան թե կրպակատերը եւ թե բնակիչները: Նույն ձեւով պետք է վարվել ասֆալտի, տանիքների, վերելակների, գազի եւ էլեկտրաէներգիայի պարտքերի հետ: Բա էլ ինչի՞ համար է պետք պատգամավորը, եթե ոչ՝ ձեր կաթացող տանիքը վերանորոգելու:

Կան, իհարկե, ավելի հեռուն գնացող ծրագրեր: «Հրազդանի» տոնավաճառի տերը, օրինակ, խոստացել է Շիրակի մարզի բնակիչներին՝ ընտրվելու դեպքում իրենց գյուղերում ջայլամներ բուծել: Պատկերացնում եմ, թե ինչպես են մինուս 15-20 ջերմաստիճանի պայմաններում վազվզելու եւ ձվադրվելու աֆրիկյան այդ կենդանիները: Բայց առաջարկողը սովորական բիզնեսմեն չի՝ Ազգային ժողովի բազմամյա պատգամավոր է՝ մեկ էլ տեսար արեց: Չէ՞ որ ջայլամներ բուծելը պատգամավորի ուղիղ պարտականությունն է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Ինչո՞ւ եք մեզ աշխարիով մեկ խայտառակում»

Գյումրու «Շիրակ կենտրոն» հ/կ-ն սոցիալապես անապահով գյումրեցիների մասին տեսանյութեր է պատրաստում ու իր կայքում տեղադրում՝ չքավոր մարդկանց համար հովանավորներ գտնելու, վառելափայտ ու տուն ձեռք բերելու ակնկալիքով: «Շիրակ կենտրոն» հ/կ-ի նախագահ Վահան Թումասյանը երեկ լրագրողներին ասաց. «Օրերս ինձ զանգահարեց Գյումրիի ՀՀԿ-ական պատգամավորներից մեկը, ես էլ ուրախացած մտածեցի, որ վերջապես գյումրեցի մեծահարուստները որոշել են օգնել իրենց սոված քաղաքացիներին: Բայց պարզվեց, որ պատգամավորը զանգել էր իր կուսակիցների անունից դժգոհելու, որ հերիք է ինտերնետում նման կադրեր տեղադրելով աշխարիով մեկ խայտառակեմ հանրապետականներին: Պատկերացնո՞ւմ եք՝ դրսում ապրող անհայտ բարերար, տեսնելով մեր տեսանյութերը, խղճահարված արդեն երրորդ տունն է գնում տնակներում ապրող գյումրեցիների համար, իսկ պատգամավորը զանգել ու բողոքում էր, թե որտեղի՞ց եմ գտնում տնակային կերպարներին ու նրանց միջոցով պախարակում հանրապետականներին»:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ









## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Գեղամյանը հո խռոված չէ՞

«Իսկ մի՞թե կարելի է չցանկանալ հայրենիքին ծառայել՝ մտավոր, ֆիզիկական, կազմակերպական քո ողջ կարողություններով: Ես հո խռոված չե՞մ մեր երկրից, որ չցանկանամ ծառայել մեր ժողովրդին, տվյալ պարագայում՝ ԱԺ-ում կամ գործադիրում հայտնվելով»,- «Առավոտի» հարցին՝ կցանկանայի՞ք ընդգրկված լինել ՀՀԿ համամասնական ցուցակում, ասաց «Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանը:

Կարդացեք էջ 3:

### Սեյրանյանը մեկնաբանությունից զերծ մնաց

Արդյոք հանրությանը հայտնի երգիչ-երգչուհիների, արվեստի գործիչների ու ընդհանրապես մտավորականների ներգրավումը որեւէ կուսակցություն եւ առավել եւս նախընտրական համամասնական ցուցակ այդ կուսակցությունն ավելի գրավի՞չ է դարձնելու: «Առավոտի» այս հարցին ի պատասխան՝ ՀՅԴ ԳՄ անդամ Սպարտակ Սեյրանյանն արձագանքեց. «Այս կամ այն կուսակցությո՛ւնը թող որոշի կամ գնահատի, թե այս կամ այն արվեստագետի ներառումը կուսակցություն կամ համամասնական ցուցակ ի՞նչ կտա կուսակցությանն ու այդ արվեստագետին: Կարծում եմ՝ սա կոնկրետ կուսակցության եւ անձի խնդիրն է, եւ ես զերծ կմնամ որեւէ մեկնաբանությունից»:

Կարդացեք էջ 2:

### Կոմունիստ Խորեն Թռչունիչը կառաջադրվի

Aravot.am-ի հետ զրույցում ԱԺ նախկին պատգամավոր, Հայաստանի կոմունիստական կուսակցության նախկին անդամ Խորեն Սարգսյանը տեղեկացրեց, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին ինքը կմասնակցի մեծամասնական ընտրակարգով: Թռչունիչն այժմ փաստաթղթերն է հավաքում՝ թիվ 24 ընտրատարածքում առաջադրվելու համար: Այս ընտրատարածքն ընդգրկում է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքը եւ հարակից 24 գյուղերը: Մեր հարցին՝ ո՞վ է սատարելու իրեն, Թռչունիչը պատասխանեց՝ «Խելացի մարդիկ»:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, ՀՖՖ գրասենյակում տեղի կունենա Ռուբեն Հայրապետյանի մամուլի ասուլիսը:

### Եղանակ

Երեւան -4 +8, Շիրակ -13 +4, Կոտայք -13 +4, Գեղարքունիք -13 +4, Լոռի -9 +8, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -13 +4, Արագածոտն նախալեռն. -6 +8, Արարատ -4 +9, Արմավիր -4 +9, Վայոց Ձոր լեռներ -13 +4, Վայոց Ձոր նախալեռն. -4 +9, Սյունիքի հովիտներ -2 +14, Սյունիքի նախալեռներ -6 +7

## Շարմազանովը պատասխանել է Բոզդաղին

Թուրքիայի փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը երեկ Բաքվում անդրադարձել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ՀՀԿ համագումարում հնչեցրած այն հայտարարությանը, համաձայն որի, «Ղարաբաղը եղել է, կա եւ մնում է հայկական հող»: Թուրք պաշտոնյան ասել է. «Ղարաբաղը թուրքական հող է, եւ այդ տարածքն ապօրինաբար օկուպացված է»: Ապա ավելացրել է. «Հայ-թուրքական հարաբերությունները չեն կարգավորվի, սահմանները չեն բացվի այնքան ժամանակ, քանի դեռ հայկական զորքերը դուրս չեն բերվել Ղարաբաղից»:

Ի պատասխան Բոզդաղի հայտարարության՝ ՀՀ ԱԺ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը երեկ հակադարձել է. «Ի գիտություն համառորեն չհասկացող թուրք փոխվարչապետի՝ տեղեկացնեմ, որ ոչ միայն Արցախն է հայկական եւ որեւէ պատմական առնչություն չունի թյուրքական ցեղերի հետ, այլեւ այն պետությունը՝ Թուրքիան, որի քաղաքացին է հանդիսանում թուրք պաշտոնյան: Հիշեցնեմ, որ ներկայիս Թուրքիան ստեղծվել է հունական եւ հայկական պատմական տարածքների հիման վրա՝ ոչնչացնելով բնիկ հայ եւ հույն բնակչությանը: Իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղի «օկուպացված» լինելուն, ապա այստեղ անելիք ունեն ադրբեջանցիները եւ թուրքերը: Ադրբեջանցիները պետք է իրենց զորքերը դուրս բերեն օկուպացված Շահումյանից եւ Գետաշենից, իսկ Թուրքիան՝ Հյուսիսային Կիպրոսից»:

## «Ազատ դեմոկրատների» համագումարի հրավիրյալների ցանկը հայտնի է

Մարտի 16-ին, ժամը 12-ին, ՀՀ կառավարության նիստերի դահլիճում տեղի է ունենալու «Ազատ դեմոկրատներ» կուսակցության երկրորդ (արտահերթ) համագումարը: Aravot.am-ի հարցին ի պատասխան՝ կուսակցությունից տեղեկացրին, որ համագումարին հրավիրվել են հայաստանյան քաղաքական դաշտը ներկայացնող գրեթե բոլոր, այդ թվում՝ ՀԱԿ-ին մաս կազմող ուժերը՝ բացառությամբ իշխող կոալիցիան ներկայացնող Հանրապետական, «Բարգավաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր» կուսակցությունների: Փոխարենը «Ազատ դեմոկրատները» իրենց համագումարին մասնակցելու համար նաեւ անհատական հրավիրատոմսեր են ուղարկել, այդ թվում՝ առանձին քաղաքական գործիչների, որոնք ներկայացնում են իշխանական թեւը:

## Պայմանագրային զինծառայող է զոհվել

Երեկ, ժամը 16.30-ի սահմաններում, Տավուշի մարզի Բերքաբեր գյուղի պաշտպանական դիրքերում ադրբեջանական դիպուկահարի կրակոցից զոհվել է պայմանագրային զինծառայող: Ինչպես Տավուշի մարզից հայտնել է «Առավոտի» թղթակից Ոսկան Սարգսյանը, զոհվածը Վանաձորի բնակիչ է:

## Մեծամասնությունը դեմ է, որ բանակն օգտագործվի

Aravot.am կայքէջում անցկացվում էր քվեարկություն՝ «Ճի՞շտ եք համարում, որ բանակն օգտագործվի արտակարգ դրության ժամանակ»: Հարցմանը մասնակցել էր 707 հոգի, որոնցից 541-ը՝ 77 տոկոսը, բացասական պատասխան է տվել հարցին: 124 հոգի պատասխանել է՝ «այո», այսինքն՝ 18 տոկոսը ճիշտ է համարում, որ բանակը եւս ներգրավված լինի արտակարգ դրության ռեժիմի մեջ: 42 հոգի՝ 5 տոկոսը, դժվարացել է պատասխանել: Մասնակցեք մեր նոր հարցմանը՝ «Հավատո՞ւմ եք արդյոք, որ մայիսի 6-ի ընտրությունները լինելու են ազատ եւ արդար»:

# ՀՀԿ-ն երեկ համալրվեց մեկ երգչով ու անկախ պատգամավորով

## Կամ՝ երգիչներն ու «դիջեյնե՞րն» են, որ պիտի զարդարեն քաղաքական ուժի համամասնական ցուցակը





Երեկ հայտնի դարձավ, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունների հենց նախաշեմին ՀՀԿ-ն համալրվել է եւս մի քանի՝ մեր հանրությանը քիչ թե շատ հայտնի անդամներով. ՀՀԿ անդամներ են դարձել ԱԺ անկախ պատգամավոր, մինչ այս ընդգծված ընդդիմադիր Վիկտոր Դալլաքյանը, երգչուհի Շուշան Պետրոսյանը եւ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը: ՀՀԿ-ին անդամակցելու դիմում է ներկայացրել նաեւ ՀՀ ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը: Ենթադրվում է նաեւ, որ ՀՀԿ համամասնական ցուցակում են լինելու երգչուհի Շուշան Պետրոսյանն ու նաեւ «դիջեյ» «Վակցինան»: «Առավոտը» փորձեց ճշտել, թե արդյոք միայն իշխանական կուսակցություննե՞րն են, որ դեմի իրենց են ձգում մասնավորապես երգիչներին, «դիջեյներին» ու ընդհանրապես արվեստագետներին, եւ արդյոք վերջիննե՞րս են, որ իրենց ներկայությամբ «զարդարելու» եւ գրավիչ են դարձնելու, օրինակ՝ ՀՀԿ նախընտրական համամասնական ցուցակը:

«Նախընտրական շրջանում՝ ընտրություններից անմիջապես առաջ, «Ժառանգությունում», եթե ստացվում են անդամակցության դիմումներ, դրանց ընթացք չի տրվում»,- մեզ հետ զրույցում հայտարարեց «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ եւ խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանը: Ըստ նրա՝ դա կուսակցության կողմից գիտակցված քայլ է, որովհետեւ ընտրությունները, որոնք, պատգամավորի ասելով, ստպասարկում են լայն հասարակության շատ այլ ստպասելիքներ, ընտրությունների նախաշեմին որոշ մարդկանց համար շատ գայթակղիչ են դառնում, եւ նրանք փորձում են իրենց այդ հավակնությունները բավարարել ընտրություններին մասնակցող կուսակցության անդամության միջոցով: «Բնականաբար, «Ժառանգությունն» ընտրություններից առաջ գիտակցաբար անցած տարիների ընթացքում էլ է այդպես արել՝ դադարեցնում է անդամակցության հարցերի քննարկումը՝ ցույց տալով, որ մենք մի կուսակցություն ենք, որի միակ արժանիքը ոչ թե իշխանության գալն ու խորհրդարան մտնելու հեռանկարն է, այլ գաղափարախոսությունը»:

«Ճիշտն ասած, երբ հիշում եմ ՀՀԿ-ի բարձրագոչ հայտարարությունը երկրորդ սերնդի բարեփոխումներ անելու մասին՝ ինքս ուզում եմ հասկանալ, թե ի՞նչ կապ ունեն այս անդամակցողները՝ երգիչ-երգչուհիները կամ արվեստի գործիչները երկրորդ սերնդի բարեփոխումների հետ, եւ ցավոք, այդ կապը չեմ գտնում»,- ասաց Սաֆարյանը, ով հավելեց, թե անցած ընտրությունների ժամանակ «Ժառանգությունում» նրանց հնարավոր անդամակցության մասին խոսք եղել է, եւ «բավականին որակյալ մարդիկ, մտավորականներ, արվեստի ներկայացուցիչներ, նաեւ լրագրողներ ու հրապարակախոսների մասին էր խոսքը, բայց մենք չենք կարծում, որ նախընտրական ցուցակները նրա համար են, որ այդ անձանց անվան տակ խորհրդարան մտնես»:

Այնուամենայնիվ, կարծիք կա նաեւ, թե՝ ավելի լավ է այս մի խորհրդարանում երգիչներ ու արվեստագետներ լինեն, քան մականունավորներ: «Խնդիրը ո՛չ մականունի մեջ է, ո՛չ սոցիալական կարգավիճակի: Խնդիրն այն է, որ երեկ ու այսօր էլ խորհրդարաններում չեն եղել այն մարդիկ, ովքեր պիտի լինեին: Այսինքն՝ եղել են մարդիկ, ում համար դա աշխատանքի վայր չէր, դա պատասխանատվություն չէր կամ օրենք գրելու հանձնառություն չէր: Ես ՀՀԿ-ին նոր անդամակցողներին լավ կամ վատ տեսանկյունից չեմ նայում: Միանշանակ կարող եմ ասել՝ եթե այնպիսի դեմքեր, ինչպիսին, ասենք՝ Սամվել Ալեքսանյանը կամ ուրիշներն են, կարող են իրենց թույլ տալ առաջադրվել մեծամասնական կամ համամասնական ընտրակարգով, ապա ինչո՞վ է նրանցից վատը Շուշան Պետրոսյանը կամ մյուսը: Ես վստահ եմ, որ մարդկային տեսակի առումով Շուշան Պետրոսյանն ավելի վատը չէ եւ միգուցե ավելի շատ արժանիքներ ունի խորհրդարանում լինելու, բայց դա դեռ չի նշանակում, թե այն, ինչ անում է ՀՀԿ-ն՝ իր այս ցուցակային խաղի միջոցով, ու դրանում «աստղեր» ներառելով, որեւէ կապ ունի խորհրդարանը բարեփոխելու փորձի հետ»:

Մենք ՀՅԴ ԳՄ անդամ Սպարտակ Սեյրանյանից էլ հետաքրքրվեցինք՝ արդյոք այս կուսակցությունում էլ զանգվածային անդամակցության գործընթաց կա՞, թե՞ ոչ, եւ արդյոք ՀՅԴ համամասնական ցուցակում մեր հանրությանը հայտնի երգիչ կամ «դիջեյներ» լինելո՞ւ են: «Մեր կուսակցության մասնակցությամբ նախկին որեւէ ընտրությունների փորձն ու պատմությունը բոլորին հայտնի է. ընտրություններից առաջ նմանատիպ երեւույթներ, գոնե մեր կուսակցության պարագայում, չեն եղել: Ես չեմ էլ կարծում, որ քաղաքական կուսակցությունն ընտրություններից առաջ պետք է իր գաղափարները տարածելու կամ քարոզչության խաղարկությունը, եթե կարելի է տվյալ դեպքում այս տերմինն օգտագործել, դնի երգիչների, երգչուհիների կամ արվեստի մյուս ճյուղերի իմ կողմից հարգված ներկայացուցիչների վրա: Եթե այս կամ այն արվեստագետն ունի քաղաքական կամ գաղափարական որոշակի հակվածություն կամ նախասիրություն՝ նա այդ կուսակցության կամ անդամը, կամ համակիրն է լինում, եւ ընտրություններից առաջ չէ, որ այդ համակրանքը կամ անդամակցության պահանջը սրվում է կամ չի սրվում: Մեր կուսակցությունում նման երեւույթ չի նկատվում, եւ անկեղծ ասած՝ այս պահին մեր խնդիրների ու աշխատանքային գործընթացի մեջ դա չէ, որ կարեւորվում է, որ դրան էլ ուշադրություն դարձնեինք»,- մեր հարցադրմանն արձագանքեց Սպարտակ Սեյրանյանը:

Այդուամենայնիվ, համաձա՞յն է այն դիտարկումներին, որ ավելի լավ է ԱԺ-ում երգիչներ կամ արվեստի ներկայացուցիչներ, քան մականունավորներ լինեն: «Իմ կարծիքով՝ ԱԺ-ում պետք է լինեն քաղաքական գործիչներ, մասնագետներ, փորձագետներ, տնտեսագետներ, իրավաբաններ, ժողովրդի մտահոգություններով եւ երկրի օրակարգով ապրող մարդիկ, ովքեր ունեն այսօր մեր պետության եւ ժողովրդի առջեւ ծառացած հիմնախնդիրների լուծման առաջարկներ ու տարբերակներ»,- հայտարարեց Սպարտակ Սեյրանյանը:

# «Ես որոշում եմ՝ գնում եմ հանրահավաքի, որոշում եմ՝ չեմ գնում»



Վերջին շրջանում ՀԱԿ-ի հանրահավաքներին Խաչատուր Սուքիասյանը չի մասնակցում, եւ սա տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տվել: Լուրեր են շրջանառվում, որ վերջին հանրահավաքին, երբ Լեւոն Տեր-Պետրոսյանը զանգել է պարոն Սուքիասյանին ու խնդրել, որ գա, նա ի պատասխան՝ ասել է «մի անգամ կրակի մեջ ընկա, էլ երկրորդ անգամ չեմ ընկնի»՝ նկատի ունենալով, թե երբ կանգնեց նախագահի կողքին՝ ինչ խնդիրների մեջ ընկավ: Երեկ Aravot.am-ի հետ զրույցում այս առնչությամբ պարոն Սուքիասյանը մեկնաբանեց. «Ես որոշում եմ՝ այսօր գնում եմ հանրահավաքի, որոշում եմ՝ չեմ գնում: Երկրորդ՝ Հայաստանում լինեմ՝ կլինեմ հանրահավաքի: Շահարկում ի՞նչ է նշանակում»:

Մենք փորձեցինք ճշտել՝ այսինքն՝ այնպես չի, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը նեղացել է ձեզնից, զանգել-ասել է, եւ չեք գնացել. «Ոչ ես եմ Լեւոն Տեր-Պետրոսյանից նեղացել, ոչ էլ ինքը՝ ինձնից: Ես երեկ իր հետ եմ եղել, հանդիպել եմ իր հետ: Ես երբ գալիս եմ՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ միշտ հանդիպում եմ, ո՞վ պետք է ինձ զանգի: Ես տնտեսական քաղաքականության մասնագետ եմ, ինձ շատ դեպքերում պետք է լինում տարբեր երկրներում լինել: Մի շատ լավ խումբ էի ստեղծել, եւ նրանց հետ շատ լավ աշխատում էինք, շատ մեծ բավականություն էի ստանում: Եթե իմանաք՝ ինչ կարգի համակարգերի մասին է խոսքը, դուք էլ բավականություն կստանաք: Այնպես չի ստացվել, որ ես այդ օրերին այստեղ լինեմ՝ գամ: Օրինակ, ուզում էի այս անգամ մարտի 1-ին լինել՝ չստացվեց: Գնացել էի մի 5 օրով, հետո պետք է գայի, այդ օրն ասեցին՝ այդ մի ուղղությամբ չկա: Դե լավ, ասեցի: Կմասնակցեի, ես ՀԱԿ-ի անդամ եմ»:

Ինչ վերաբերում է «կրակի մեջ ընկնելուն»՝ պարոն Սուքիասյանը հերքեց դա՝ ասելով. «Բոլորը գիտեն՝ ցանկացած բան ոնց է տարածվում»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

Ա aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 15.03.2012

# «Դուխով տղայի խոստովանությունը թանկ արժե»

## Կամ Գեղամյանը՝ ՀՀ նախագահների ու պղտոր ջրում ձուկ որսացողների մասին

- Բոլոր կուսակցությունները թոհուբոհի մեջ են՝ ընտրացուցակներ են կազմում, մեծամասնականով առաջադրումներն են ճշգրտում. «Ազգային միաբանություն» «հանգիստ» նստած եք՝ չե՞ք մասնակցելու խորհրդարանական ընտրություններին:

- Թվացյալ հանգստություն է: Խաղաղ օվկիանոսն էլ խաղաղ են ասում, բայց ամենաուժեղ փոթորիկները այդ օվկիանոսում են: Մենք բավականաչափ լուրջ վերլուծական աշխատանքներ ենք կատարում: Իսկ ընտրություններին ԱՄ-ն, ինչպես միշտ, աչքի է ընկնելու ոչ թե ճղճղան ասուլիսներով կամ անհասկանալի գաղափարական ուղղվածություն ունեցող հանրահավաքներով, միջոցառումներով, այլ ծրագրային առաջարկներով, որոնք կներառեն մեր կյանքի բոլոր ոլորտները: Թվացյալ հանգստություն է, եւ թող այդ հանգստությունը ոչ մեկին, հատկապես մեր քաղաքական ընդդիմախոսներին, մոլորության մեջ չգցի, որ հանկարծ չհայտնվեն ինքնահանգստացման թմբիրում, որը կարող է հետագայում քաղաքականապես շատ թանկ նստել իրենց վրա:

- Այսինքն՝ կուսակցությունը համամասնական կարգով չի՞ մասնակցելու ընտրություններին:

- Դժվարանում եմ ասել: Մինչեւ ամսի 18-ը դեռ բավականաչափ ժամանակ ունենք: Մեր կուսակցությունն աշխատում է երբեք ու երբեք չդավաճանել ողջամտությանը: Մեր ներկայությունն ԱԺ-ում այսօր պետք է որոշվի՝ ելնելով հայոց պետականության ամենանվիրական շահերից: Կարող է՝ կուսակցությունը ներկայացված լինի ԱԺ-ում, կարող է՝ գործադիր մարմնում, համենայնդեպս, ակնհայտ է, որ կուսակցությունն ունի մարդիկ, որոնք այսօր ավելի քան պահանջված են մեր երկրում, հատկապես այն մեծ խնդիրների լուծման ճանապարհին, որոնց մասին խոսվեց հանրապետության նախագահի կողմից՝ ՀՀԿ 13-րդ համագումարում:

- Հնարավոր է, որ Դուք ներառված լինեք ՀՀԿ համամասնական ցուցակո՞ւմ:

- ՀՀԿ համամասնական ցուցակի հետ կապված հնարավորությունների մասին ձեզ կարող է ճշգրիտ ասել ՀՀԿ նորընտիր գործադիր մարմինը:

- Իսկ նախագահի համագումարյան երկարաշունչ ելույթն ինչպե՞ս եք գնահատում: Ընդդիմության ներկայացուցիչներն ասացին, որ դա ծիծաղելի ելույթ էր, փաստեր չկային եւ ընդդիմադիր գործչին հարիր ելույթ էր:

- Ընդդիմությունն այսօր հայտնվել է մի այնպիսի վիճակում, որ այդ վիճակից, կարծում եմ, ամեն ինչ իրենց ծիծաղելի է թվում: Պետք չէ չարախնդալ, այլ պետք է ըմբռնումով մոտենալ այն հարվածին, որը, դիցուք, ստացավ ընդդիմությունը վերջին հանրահավաքի ժամանակ՝ կողքից նայում էիր, չգիտեիր՝ բեմը ձախի՞ց է, թե՞ աջից. մարդկանց մի մասը հայացքը նետել էր Հյուսիսային պողոտա, մի մասը Օպերայի շենքին էր նայում: Այդ վիճակում հայտնված ընդդիմության որոշակի ներկայացուցիչների մոտ է միայն եւ միայն ծիծաղել կամ էլ լալ՝ այն վիճակի համար, որում հայտնվեցին՝ հուսահատեցնելով, հուսախաբելով հազարավոր այն մարդկանց, ովքեր մոլորության մեջ գտնվելով՝ ի դեմս այդ ընդդիմադիրների, փորձում էին տեսնել այլընտրանք գործող իշխանություններին: Եվ սա ես ասում եմ ցավով ու ափսոսանքով, որովհետեւ ՀԱԿ-ում էլ քիչ չեն հայրենասեր գործիչներ:

Ես համաձայն չեմ ձեր «երկարաշունչ» ձեւակերպմանը: Նախագահի ելույթը մի շնչով արտասանված ելույթ էր, որը շատ բազմաբովանդակ եւ բացառիկ էր մի քանի երանգավորումներից ելնելով: Առաջին դեպքն էր, երբ երկրի նախագահը, սթափ գիտակցելով երկրի առաջ ծառացած մարտահրավերները, որոնք մեծապես պայմանավորված են տարածաշրջանում խմորվող աշխարհաքաղաքական բարդ զարգացումներով, կոչով հանդես եկավ՝ իր զինակիցներին եւ գործընկերներին ասելով, որ անհրաժեշտ է փոխվել: Իսկ փոխվելու համար անհրաժեշտ է հավատ ունենալ: Սա բնութագրում է նախագահին՝ որպես լիդերի, որը լիարժեքորեն տիրապետում է իրավիճակին: Սա խոսում է այն մասին, որ նախագահը բավարարված չէ զարգացման առկա տեմպերով: Եվ որ պակաս կարեւոր չէ, կոչն արվում է ՌԴ նորընտիր եւ ԵԺԿ նախագահների՝ Վլադիմիր Պուտինի եւ Ուիլֆրիդ Մարտենսի՝ ՀՀԿ 13-րդ համագումարին հղած ողջույնից հետո, որոնք շատ բարձր գնահատականի են արժանացնում նախագահին ու իր հենարան ՀՀԿ-ն, մաղթում հաղթանակներ եւ փաստում, որ Սերժ Սարգսյանը եւ ՀՀԿ-ն բացահայտ հաջողությունների են հասել գոնե արտաքին քաղաքականության ոլորտում, այն է՝ խորացնելով ռազմավարական գործընկերային հարաբերությունները ՌԴ-ի եւ ԵՄ-ի հետ:

- Սերժ Սարգսյանը չորս տարի նախագահել է. տարակուսանք չի՞ առաջացնում չորս տարիների նախագահությունից հետո հավատալու կոչը:

- Բայց դուք հիշեք մարտի 1-ից հետո, երբ հայը հայի նկատմամբ թշնամաբար էր տրամադրված, երբ հարյուրավոր մարդիկ բանտարկված էին, երբ ատելությամբ էին լցված, երբ արցախյան սահմանագծում դիպուկահարների ամեն մի կատարած սպանությունը դառնում էր շանտաժի առարկա: Սերժ Սարգսյանը կարողացավ հաղթահարել այդ թշնամանքը, հնարավորինս մեղմել այդ ցավը եւ բարոյական կորուստները, եւ մարդիկ կամաց-կամաց դարձան փոխադարձ հանդուրժող: Այդ մթնոլորտի ձեւավորման պարագայում, բնականաբար, նախագահին իմաստնություն էր անհրաժեշտ, որ ասի՝ վերափոխվենք, որ չհասցնենք Հայաստանն էլի այն վիճակին, որին հասցրել էին 2008-ի ընտրությունների նախաշեմին՝ թշնամանքի: Պետք է վերափոխվել նաեւ այն պատճառով, որ այն համակարգը, որը վերջին չորս տասնամյակում ձեւավորվել է աշխարհում, արդեն իսկ ի զորու չէ իր ընդերքում ծնված ճգնաժամերը հաղթահարել, ինչպես ցույց տվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Եվ ամենեւին էլ պատահական չէ, որ համակարգային փոփոխությունների փնտրտուքի մեջ են այսօր թե ԵՄ-ի առաջադեմ երկրները, թե ԱՄՆ-ը, թե ՌԴ-ն… Այնպես որ, միանգամայն արդարացված էր Սերժ Սարգսյանի այն մտորումը, որ մարդն ինքը պետք է վերափոխվի, որ կարողանա իրողություններին բացարձակապես այլ՝ իրատեսական աչքերով նայել:

- Նախագահ Սարգսյանի ելույթում արդյոք նաեւ հանդիմանանք չկա՞ր Ռոբերտ Քոչարյանի հասցեին:

- Բացարձակապես՝ ոչ: Ի տարբերություն Ռոբերտ Քոչարյանի՝ Սերժ Սարգսյանը մարդկային հատկանիշներով շատ ավելի բարձր անձնավորություն է: Սարգսյանը քինախնդիր չէ, ներելու ունակություն ունի, իր մեջ մի այնպիսի հետաքրքիր գաղտնիք կա, որ անգամ իսկ մարդ, որն իր նախագահության օրոք ճաղավանդակների ետեւում է հայտնվում, խոսքս «Սասուն» ջոկատի հրամանատար, մեր քաջարի եւ հայրենասեր Սասուն Միքայելյանի մասին է, ով անգամ իր տեսակետից անարդարացի դատվելով եւ նստելով՝ բանտում, բանտարկված վիճակում ասում էր՝ հա, Սերժ Սարգսյանն իմ ընկերն ա: Իսկ նման խոստովանությունը՝ դուխով տղայի խոստովանությունը, թանկ արժե: Երբեք ու երբեք Սերժ Սարգսյանն, իմ կարծիքով, մտքով անգամ չի անցկացրել հանդիմանել Ռոբերտ Քոչարյանին, ուրիշ բան, որ հիմա փորձում են այստեղ էլ թշնամության ծիլեր տեսնել: Պղտոր ջրում ձկնորսների թիվը շատանում է:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ




# Իշխանությունների կողմից ամեն ինչ արվել է հակառակ խոստումների

## Ասում է ՀԱԿ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Վլադիմիր Կարապետյանը

«Բոլոր երեք կետերը, որոնք որպես առավելություն ներկայացրեց Սերժ Սարգսյանը, ցույց են տալիս, որ ոչ մի առաջընթաց չկա, եւ մենք բազմիցս ասել ենք դրա մասին»,- Aravot.am-ի հետ զրույցում մեկնաբանելով ՀՀԿ 13-րդ համագումարում նախագահ Սերժ Սարգսյանի ելույթում ՀՀ արտաքին քաղաքական ոլորտում արձանագրված ձեռքբերումները՝ ասաց ՀԱԿ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի անդամ Վլադիմիր Կարապետյանը:

«Սերժ Սարգսյանն, ինչպես նաեւ Էդվարդ Նալբանդյանը մշտապես նշում են, որ հիմա պաշտոնական մակարդակում որեւէ կոնտակտ չկա Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ: Այսինքն՝ այդ Սերժ Սարգսյանի քաղաքականությունն է, որ այսօր ամենացածր մակարդակի վրա են երկկողմ հարաբերությունները, եւ ոչ մի վստահություն, ոչ մի կոնտակտ չկա կողմերի միջեւ»,- ասում է մեր զրուցակիցը՝ ընդգծելով, որ նախկինում երբեք նման իրավիճակներ չեն եղել: Ավելին, ինչ-որ մակարդակների շփումներ, ինչ-որ հույսեր միշտ եղել են, մինչդեռ այսօր գործընթացն ամբողջությամբ փակուղում է, դրան նպաստում է նաեւ թե Թուրքիայի, թե Հայաստանի իշխանությունների այնպիսի կեցվածքը, որը բացառում է որեւէ շփում պաշտոնական Երեւանի եւ Անկարայի հետ: Այս համատեքստում Կարապետյանը նշում է նաեւ Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում տեղի ունեցած աննախադեպ հակահայկական հանրահավաքը՝ դա նույնպես Սերժ Սարգսյանի՝ թուրքական ուղղությամբ վարած քաղաքականության արդյունք համարելով, որը հասցրեց երկկողմ հարաբերությունների նման սառնության, ինչպես նաեւ դրանց կարգավորման հեռանկարին:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի խնդրին, Վլադիմիր Կարապետյանը հիշեցնում է Սերժ Սարգսյանի՝ 2008-ի նախընտրական ծրագիրը, որում ասվում է, որ իր նախագահության տարիներին փորձելու են հասնել նրան, որ կարգավորումը լինի այն սկզբունքներով, որոնք հնարավորություն կտան Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ ընդհանուր սահման ունենալ: «Այս ուղղությամբ որեւէ քայլ չի արվել, որեւէ առաջընթաց չկա, եւ ավելին, մի քանի հրապարակումով մենք խոսում ենք ինչ-որ միջանցքների մասին՝ ցույց տալով, որ այդ խոստումից, փաստորեն, հետ ենք կանգնել»,- փաստում է Կարապետյանը՝ հավելելով, որ քաղաքական գործիչը պետք է պատասխանատու լինի իր խոստումների համար, եւ այսօր իսկական ժամանակն էր, որ Սարգսյանը հիշեր իր խոստումը եւ ասեր, թե ի՞նչ է արել այդ ուղղությամբ: Նախագահի ելույթի այն հատվածին, որտեղ խոսվում է Ղարաբաղը լիիրավ կողմ դարձնելու մասին, ՀԱԿ ներկայացուցիչը հակադարձում է. «Դա ասում է մի անձնավորություն, ով ստորագրել է երեք փաստաթուղթ: Ես ուզում եմ ընդգծել, որ թե Քոչարյանը, թե Տեր-Պետրոսյանը՝ չնայած բազմիցս եղած առաջարկներին՝ Ալիեւների հետ ստորագրել փաստաթղթեր, մերժել են, քանի որ հարկ են համարել, որ փաստաթղթի տակ անպայման լինի ԼՂՀ-ի ստորագրությունը: Սերժ Սարգսյանն ուղիղ հակառակ է գնացել իր ասածին: Բացի այդ, հիմա սեղանին մի փաստաթուղթ է՝ Մադրիդյան սկզբունքները, որը հաստատվեց ԵՄ փետրվարի 27-ին ընդունած փաստաթղթով, որում նախատեսված չէր Ղարաբաղի՝ որեւէ կերպ հավասարի մակարդակով մասնակցությունը: Առհասարակ, այդ փաստաթղթում չկա որեւէ դրույթ, որը կվկայեր, որ թեկուզ ապագա բանակցություններում Ղարաբաղը կարող է մասնակցել որպես լիիրավ կողմ: Մադրիդյան սկզբունքների ընդունումից 4,5 տարի է անցել, բայց մենք նույն վիճակում ենք գտնվում: Ոչ մի բան չի արվել այս ուղղությամբ, իրենց խոստումներն էլ ձախողել են, ամեն ինչ հակառակ խոստումների է արվել այս իշխանությունների կողմից»,- ասաց Վլադիմիր Կարապետյանը:



Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Գյումրեցի անօթեւաններին գլխառա՞դ են անում

Այս քաղաքի բնակիչների բնակարանային խնդիրները դեռ վերջնականապես չլուծած՝ ՀՀ կառավարությունն այս հարցը փակված է համարում:



Գյումրիի մի խումբ մտավորականներ՝ մոտ 30 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի պաշտոնյաներ, երեկ «կլոր սեղան» կազմակերպելով, դիմում-ուղերձ հղեցին հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին ու ՀՀ վարչապետին՝ պահանջելով եւս 1200 բնակարան կառուցել երկրաշարժից հետո ավերակների վերածված քաղաքում: Սոցիալական հարցերով զբաղվող «Շիրակ կենտրոն» կազմակերպության նախագահ Վահան Թումասյանի պարզաբանմամբ՝ բանն այն է, որ ՀՀ կառավարությունը Գյումրիում 2800 բնակարան կառուցելով, այլեւս նպատակ չունի բնակարանաշինությունը շարունակելու, ավելին՝ որոշել է մինչեւ 2013 թվականը վերջակետ դնել այս խնդրին:

«Իշխանությունը ներկայացնող պաշտոնյաների ու պատգամավորների խոսքերից գիտե՞ք՝ ինչ ենք նկատել՝ ցանկություն կա տպավորություն ստեղծելու, որ անօթեւանության խնդիրը Գյումրիում փակված է»,- ասում է Վահան Թումասյանը: Սակայն, նրա ամենամեղմ հաշվարկներով, Գյումրիում դեռեւս 1200 բնակարանի կարիքավորներ կան, որոնք շահառու չեն ճանաչվել տարբեր պատճառներով, ասենք՝ չեն կարողացել հայթայթել պահանջվող փաստաթղթերը: Բնականաբար՝ նրանք նույնպես ապրում են խարխուլ, դարն ապրած տնակներում եւ գլխներին տանիք ունենալու իրավունք ունեն: Գյումրեցի մտավորականներին մասնավորապես վրդովեցրել էր այն, որ հայրենի կառավարությունը, բնակարանաշինության թեման փակված համարելով, մտադրվել է մյուս անօթեւանների հարցերը լուծել նրանց բնակարանային գնման վկայագրեր (ԲԳՎ) հրամցնելով: Նշենք, որ սա, ըստ գյումրեցիների, «սարսափելի» մի ծրագիր է. պետությունը, անօթեւանին որոշակի գումար տալով, փողոցներ է գցում՝ տուն գտնելուու բարդ գործը նրա ուսերին դնելով: Եվ քանի որ պետության հատկացրած գումարը, որպես կանոն, չի բավարարում բնակարան ձեռք բերելու համար, մարդիկ ճարահատյալ հրաժարվում են ԲԳՎ ծրագրից:

«Կլոր սեղանի» մասնակիցների կարծիքով՝ սրանով պետությունը նպաստում է նաեւ արտագաղթին՝ շատերը, ԲԳՎ-ի փողը ստանալով, ոչ թե բնակարան են ձեռք բերում, այլ լքում են երկիրը: Վահան Թումասյանի ներկայացմամբ, ԲԳՎ-ների արդյունավետությունը 20-25 տոկոս է: Երեկ նամակագիրները բնակբաշխման հանձնաժողովից պահանջում էին նաեւ վերջ դնել զավեշտալի բովանդակությամբ փաստաթղթերի ձեռքբերմանը, օրինակ՝ եթե շահառուն սխալվի ու չամուսնանա, ապա նրան զագսերն են գցում, թե գնա՝ թուղթ բեր, որ դու ամուսնացած չես:

«Պետությունը անօթեւաններին պիտի ազատի լրացուցիչ չարչարանքներից, 2-3 կիլոգրամի չափով թուղթ ուզելու փոխարեն՝ իրենք պետք է ճշտեն անօթեւանների տվյալները, էս մարդկանց ավելորդ քաշքուկների ու վազվզոցի մեջ են գցում, պահելի էներգիա են ծախսում, բայց 25 տարի է՝ էս մարդիկ դրանով են զբաղված»,- ասաց Գյումրու ժուռնալիստների «Աստարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը: Վահան Թումասյանն էլ հավելեց. «Պետությունը պարտք է Գյումրի քաղաքին, 23 տարի բոլոր իշխանությունները հսկայական վնաս են հասցրել այս քաղաքի բնակիչներին՝ թողնելով այն ծանր պայմանների մեջ, մարդիկ հազարավոր հիվանդություններ են ձեռք բերել՝ նյարդեր ու առողջություն քայքայելով, մարդն ասում է՝ եթե ինձ բնակարան չէիք տալու, շուտ ասեիք, ես գնայի նորմալ ապրեի, ես չեմ ուզում լքել իմ երկիրը, 23 տարի սպասել եմ, հիմա գալիս ասում եք՝ գիտեք ինչ՝ բնակարան չես ստանալու: Թող տպավորություն չստեղծեն, թե բնակարանաշինությունն ավարտել են, ծածկադմբոց անելով չէ»: Գյումրու քաղաքապետարանի պաշտոնյաներից մեկն էլ՝ Անուշավան Պապիկյանը հիշեց «Շիրակի դավաճան մարզպետներից» մեկին՝ դաշնակցական Ռոմիկ Մանուկյանին, որը կառավարությանը շփոթության մեջ էր գցում՝ հակաճառելով Գյումրու քաղաքապետին ու պնդելով, որ Գյումրիում 5000-6000-ի փոխարեն՝ 1500 անօթեւան կա:

«Այն, որ բնակարանաշինությունը Գյումրիում երկարաձգվեց, նման մարզպետների շնորհքն էր»,-նեղսրտեց քաղաքապետարանի պաշտոնյան: «Շիրակ կենտրոն» հ/կ-ի նախագահն էլ ասաց. «Տնակային ավաններում ինչ ասես չես տեսնի՝ անչափահասների թրաֆիքինգ, նարկոմանիա, սա նորմալ պետության պատկե՞ր է: Եթե մարդուն տարիներ շարունակ տուն չեն տալիս, աշխատանք չունի, բայց զրկում են նպաստից, նման իրավիճակում էդ մարդը կարո՞ղ է հայրենասեր լինել: Թողնես մարդկանց բոմժ անվանեն: Եթե ցանկացած պատգամավորի ու նախարարի Գյումրիի տնակներ բերես, փողն էլ ջեբերից դատարկես, կդառնա իրենց ասած բոմժը»: Ըստ նրա, Գյումրիի նորակառույց շենքերը կշահագործեն ոչ թե Ազգային ժողովի, այլ՝ նախագահական ընտրություններից առաջ:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# «Սիթի Պետրոլ Գրուպ»-ը տուգանվեց

Երեկ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը «Սիթի Պետրոլ Գրուպ» (CPS) ընկերությանը տուգանեց 100 միլիոն դրամ՝ գերիշխող դիրքը չարաշահելու համար: Բենզինի եւ դիզելային վառելիքի շուկաներում գործող այս ընկերությունը, որը հանդիսանում է գերիշխող եւ զբաղեցնում է բենզինի շուկայի 41,76%-ը ու դիզելային վառելիքի շուկայի 40,8%-ը, փորձել է շուկայից դուրս մղել եւ սնանկացնել համեմատաբար փոքր բենզալցակայանների սեփականատերերին: Հանձնաժողովն ուսումնասիրություններ էր կատարել հանրապետության ողջ տարածքով եւ պարզել, որ ընկերության վարած գնային քաղաքականության արդյունքում անհատ քաղաքացիներին պատկանող փոքր բենզալցակայանները սնանկանում են եւ դրանց սեփականատերերը ստիպված իրենց բիզնեսը ոչ շահավետ պայմաններով վաճառում են «Սիթի Պետրոլ Գրուպ»-ին: Հանձնաժողովի երեկվա նիստում պարզ դարձավ, որ ընկերությունը մեծածախ բազաներից վառելիքը իրացնում է այն գնով, ինչ գնով որ արդեն իսկ վաճառում է իրեն պատկանող տասնյակ բենզալցակայաններում: Ստացվում է, որ «Սիթի Պետրոլ Գրուպ» ընկերությունից բենզին եւ դիզելային վառելիք ձեռք բերող փոքր տնտեսվարողները հայտնվել են, մեղմ ասած, անմխիթար վիճակում, քանի որ չեն կարող այն վաճառել ավելի բարձր գնով, քան ներկրող ընկերության բենզալցակայաններում է, եւ հատկապես մարզերում չեն էլ կարող օգտվել այլ մատակարարից, քանի որ մեծածախ առեւտրի բազաներ շատ վայրերում ունի միայն հենց այս ընկերությունը:

Ըստ փոքր բենզալցակայանների հետ կնքած պայմանագրերի, շահույթի 98%-ը տնօրինում է «Սիթի Պետրոլ Գրուպ»-ը, իսկ մնացած 2%-ը՝ տվյալ բենզալցակայանի իրական սեփականատերը: Փաստորեն, շահագործելով այլ տնտեսվարողի հիմնադրած բիզնեսը, շահույթը գրեթե ամբողջությամբ ստացել է «Սիթի Պետրոլ Գրուպ»-ը: Օրինակ՝ միայն Վանաձոր քաղաքում ընկերությունը ունի 8 բենզալցակայան, որոնցից 7-ը ձեռք է բերել հենց այդ ճանապարհով: Հանձնաժողովի որոշմամբ՝ ընկերությունը եռօրյա ժամկետում պարտավոր է վերացնել խախտումն ամբողջությամբ եւ աշխատել արդար մրցակցային կանոններով:

Երեկ երեկոյան «Սիթի Պետրոլ Գրուպը» հաղորդագրություն տարածեց, որում իր անհամաձայնությունն էր հայտնում ՏՄՊՊՀ որոշման կապակցությամբ եւ ասում, որ բողոքարկելու է որոշումը:

## Կունենան շուրջօրյա ջրամատակարարում

Մարտի 14-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծերենցի փողոցի 5 հասցեում տեղակայված բակային պոմպակայանում լարված իրավիճակ էր:

«Երեւան Ջուր» ՓԲԸ «Արեւմուտք» շահագործման տնօրինության «Շահումյան» տեղամասի մասնագետները պետք է մինչեւ երեկո ավարտեին նոր՝ դանիական Գրունդ Ֆոս /grundfos/ ֆիրմայի արտադրության պոմպի եւ հարակից սարքավորումների տեղակայումը:

Ի տարբերություն գործողի, այն ոչ միայն անհամեմատ նվազ էներգատար է, այլեւ շատ ավելի հուսալի եւ, որն այսօր նույնքան կարեւոր է, ի վիճակի է սպասարկման տարածքում՝ Ծերենցի փողոցի 3, 5, 7, 7ա, Միքայելյան փողոցի 1, 3, Սեբաստիա փողոցի 78, 80, 82, 86, Ա. Մանուկյան փողոցի 2, 4, 6, 8, 10 շենքերում ապահովել շուրջօրյա ջրամատակարարում:

Ըստ տեղամասի գլխավոր ճարտարագետ Արսեն Սիմոնյանի, տվյալ տարածքում վերջին ամիսներին իրականացվել են նմանօրինակ շատ աշխատանքներ: Մասնավորապես, պոմպակայանների վերազինումից բացի, կառուցվել են դիտահորեր ու ջրաբաշխիչ հանգույցներ, հայտնաբերվել են չհաշվառված ջրագծեր ու գաղտնի վթարներ: Արդյունքում զգալիորեն նվազել է ջրի կորուստն ու բարելավվել սպառողների ջրամատակարարումը:

Առաջիկայում, մասնագիտացված կազմակերպության կողմից պոմպակայանում կարգավորման-կարգաբերման աշխատանքների իրականացումից հետո, նշված շենքերի բնակիչների համար ներկայիս 12-ժամյա ջրամատակարարումը կդառնա հիշողություն:

«Երեւան Ջուր» ՓԲԸ հաղորդակցության բաժին

## Փետրվարին շուրջօրյա ջուր է ունեցել երեւանցիների 73%-ը

(Երեւան Ջուր»+ ՓԲԸ գործունեության արդյունքները.
2012թ. փետրվարը՝ 2011թ. փետրվարի նկատմամբ)

Ընթացիկ տարվա փետրվարի ձեռքբերումները եւս մեկ անգամ վկայում են, որ «Երեւան Ջուր» ՓԲԸ հունվարյան հաջող մեկնարկը, որին արդեն անդրադարձել են զանգվածային լրատվամիջոցները, ոչ թե պատահականություն էր, այլ համակարգում վերջին տարիներին իրականացվող ծրագրերի տրամաբանական արդյունք:

Մասնավորապես՝ ջրամատակարարման շարունակականությունը Երեւանում, որն ընկերության կարեւորագույն ցուցանիշներից մեկն է, կազմել է 95,8%: Մինչդեռ Վարձակալության պայմանագրով նախատեսված 95%-ին ընկերությունը պետք է հասներ միայն 2016թ.: Ընդ որում՝ շուրջօրյա ջրամատակարարում է ունեցել բաժանորդների 73%-ը, 17,0-23,5 ժամ՝ 5%-ը, իսկ 12,0-17,0 ժամ՝ 22%-ը: Հարկ է նշել, որ 2011թ. դեկտեմբերից (2012թ. ապրիլի փոխարեն) Երեւանում ջրամատակարարման նվազագույն տեւողությունը կազմում է 12 ժամ: Ներկայումս տարվում են աշխատանքներ՝ առաջիկա ամռանը, կապված ջրի սպառման ծավալների ավելացման հետ, վերը նշված շարունակականության պատանումները նվազագույնի հասցնելու համար:

Ինչպես երեւում է ստորեւ բերվող աղյուսակից, ջրամատակարարման բարելավումը, ինչպես եւ հունվարին, ուղեկցվել է աղբյուրներից վերցվող ջրաքանակի եւ էլեկտրաէներգիայի սպառման ծավալների նվազեցմամբ, որն առաջին հերթին վկայում է համակարգում ջրի ռացիոնալ օգտագործման, կորուստների եւ ապօրինությունների դեմ պայքարի արդյունավետության մասին: Ղեկավարվելով «Մենք հաշվետու ենք հանրության առջեւ» կարգախոսով՝ «Երեւան Ջուր» ընկերությունը հետագայում նույնպես շարունակելու է ամենամսյա նմանօրինակ հրապարակումները՝ համակարգում տարվող աշխատանքների եւ ձեռքբերումների վերաբերյալ:

| Հիմնական ցուցանիշներ | 2007թ. փետրվար | 2011 թ. փետրվար | 2012թ. փետրվար | 2012թ. փետրվարը 2011թ. փետրվարի համեմատ /+ - / |
|---|---|---|---|---|
| Աղբյուրներից վերցված ջրաքանակ՝ լիտր/վայրկյան | 11,600 | 10,194 | 9,590 | - 604 կամ -5,9% /2007թ. փետրվարից՝ - 2010 / -17,3%/ |
| Էլեկտրաէներգիայի սպառում՝ կՎտժ/օր | 349,000 | 183,000 | 117,000 | - 66,000 կամ -37% /2007թ. փետրվարից՝ -232,000 / -66,5% |
| Ջրամատակարարման միջին տևողություն /ժամ/ | 18,34 | 21,84 | 22,99 | + 5,3%, /2007թ. փետրվարից՝ +25,4% |

«Երեւան Ջուր» ՓԲԸ հաղորդակցության բաժին

Առավոտ daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 15.03.2012

# Աշխարհում լրագրողների դեմ կիրառված բռնությունների 90 տոկոսը բացահայտված չէ

Աշխարհի տարբեր երկրներում լրագրողների նկատմամբ տարեկան բռնությունների հարյուրավոր դեպքեր են գրանցվում:

Այդ մասին Աղվերանում Հայաստանի ժուռնալիստների միության կազմակերպած լրագրողների անվտանգությանը, իրավունքներին եւ ստանդարտներին նվիրված սեմինար-քննարկման ժամանակ ասաց «Լրագրողների միջազգային ֆեդերացիայի» ծրագրի համակարգող Ադրիեն Քոլլինը:

Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսելում գործող «Լրագրողների միջազգային ֆեդերացիան» լրագրողների սոցիալական եւ մասնագիտական իրավունքները պաշտպանող կառույց է: «ԺՄՖ-ն արձագանքում է լրագրողների նկատմամբ կիրառված բռնությունների մասին տարբեր երկրներից ստացված զեկույցներին, ուսումնասիրություններից ու փաստերը ճշտելուց հետո միջազգային հանրությանը դեպքին տեղեկացնելու նպատակով այն տարածում է շուրջ 3000 լրագրողի, ապա բռնության ենթարկված լրագրողին անհրաժեշտ օգնություն տրամադրում»,- պարզաբանում է Քոլլինը:



Նա նշում է, որ Ֆեդերացիայում լրագրողների դեմ գրանցված բռնությունները տարբեր բնույթի են՝ ծեծ, նկարահանելու արգելք, սպառնալիք, վիրավորանք, առեւանգում, սպանություն, դանակահարություն, անհայտացում, ձերբակալում, կալանք, ճնշումներ, ահաբեկում, տեղեկատվության ազատության սահմանափակումներ, անազնիվ մերժումներ եւ այլն:

Ռուսաստանի Դաշնությունը, Իրանը, Իրաքը, Մեքսիկան այն երկրներն են, որտեղ լրագրողների սպանության ամենաշատ դեպքերն են արձանագրվում: Առեւանգումների թվով առաջատար են Սոմալիի Հանրապետությունը, Պակիստանն ու Մեքսիկան:

«Դեպքերին տեղյակ լինելը նաեւ տվյալ երկրում գործող ժուռնալիստների միության հզոր լինելու արդյունքն էլ է: Ամեն տեսակի բռնարարքների դեպքում, օրինակ, ՌԴ ժուռնալիստների միությունը արձագանքում է, ակտիվ են»,- նշված երկրներում բռնարարքների թվի ցուցանիշների բարձր լինելու պատճառների մասին է պատմում Քոլլինը:

Սակայն նա նշում է, որ բռնությունների 90 տոկոսը այդպես էլ մնում է չբացահայտված:

Նա հիշում է 2009 թվականին Ֆիլիպիններում տեղի ունեցած միջադեպը, որի ժամանակ 29 լրագրող եւ 1 պետական պաշտոնյա էր սպանվել: «Ճիշտ է, սպանողները բանտարկվեցին, սակայն մինչ օրս կազմակերպիչները բացահայտված չեն»,- բռնության դեպքի մասին է պատմում ծրագրի համակարգողը:

Ի տարբերություն այլ երկրների, Քոլլինի խոսքերով, Բելգիայի Թագավորությունում լրագրողների իրավունքները օրենսդրական մակարդակով են պաշտպանված: «Արդյունքում՝ լրագրողների նկատմամբ բռնությունները սակավ են, սակայն այդ դեպքում էլ ոստիկանները պրոֆեսիոնալ են աշխատում: Մենք հարգում ենք ԶԼՄ-ների անկախությունը, իրավունքները»,- եզրափակում է Ադրիեն Քոլլինը:

Սեմինար-քննարկման արդյունքում Հայաստանը՝ ի դեմս Հայաստանի ժուռնալիստների միության, հնարավորություն ունի լրագրողների դեմ կիրառված բռնությունների մասին ահազանգելու ԼՄՖ:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

Վանաձոր

## Լավն էլ կա




Վերջերս քննադատական հոդվածներ եմ գրել Երեւանի քաղաքապետի մասին՝ կապված Մաշտոցի այգու հետ եւ ոստիկանապետի մասին՝ կապված լրագրող Հայկ Գեւորգյանի կալանավորման հետ: Բայց վատի կողքին լավն էլ կա, մասնավորապես, ձյունը դեռ չհալչած՝ քաղաքապետարանը սկսել է ասֆալտապատել աղից ու ձնհալից վնասված փողոցները: Քաղաքապետարանի կողմից նման օպերատիվություն երբեք չեմ տեսել: Պատգամավորության թեկնածուներ էլ ասֆալտի մոտ կանգնած չեն: Ոստիկանները նույնպես սկսել են մարդկային կերպար ստանալ, Մաշտոցի այգին փրկելու ակցիայի մասնակիցների հետ իրենց շփումը նորմալ, մարդկային ձեւով են իրականացնում, հումոր են անում, ժպտում, ծաղիկներ են նվիրում, մի խոսքով՝ ակցիայի մասնակիցների հանդեպ ատելություն չի նկատվում, մարդիկ պարզապես իրենց գործն են անում:

Սենց որ գնա, կամաց-կամաց կսկսենք սիրել մեր իշխանություններին, դե իսկ ընտրություններն էլ, եթե առանց կեղծիքների անցկացվեն...

ԿԱՐԵՆ ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

Փաստաբան

## Թամամյանի գործով վկաներն էին եկել դատարան

Երեկ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Վարդանյանը հետաձգեց ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետ Հովհաննես Թամամյանի, ոստիկանության Արաբկիրի բաժնի օպերատիվ պետի տեղակալ Արմեն Պողոսյանի եւ հատկապես կարեւորագույն գործերով քննիչ Վահե Խանզադյանի դեմ հարուցած քրեական գործի դատաքննությունը:



Արմեն Պողոսյանը, որը նախորդ նիստին հրաժարվել էր իր պաշտպանից՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ Արայիկ Ալվանդյանից, եւ խնդրել, որ իր պաշտպանությունն իրականացնի փաստաբան Հայկ Ալումյանը, նորից իր պաշտպանի՝ Արայիկ Ալվանդյանի հետ էր: Վերջինս միջնորդեց, որպեսզի դատական նիստը մեկ օրով հետաձգվի, պատճառաբանելով, թե «անհրաժեշտ է դիրքորոշման հետ կապված ճշտումներ անել»: Դատական նիստի մասնակիցները չառարկեցին եւ դատաքննությունը նշանակվեց մարտի 15-ին:

Այս նույն դատարանում նույն օրը նաեւ ճանապարհային ոստիկանության նախկին պետի եւ մյուսների դատավարությունն էլ է, եւ մեղադրող Հարություն Հարությունյանը միջնորդեց, որպեսզի ժամը փոխվի: Մարգար Օհանյանի եւ մյուսների գործով դատաքննությունը ժամը 11.30-ին է, իսկ Հովհաննես Թամամյանի եւ մյուսների գործը նշանակվեց ժամը 15.30-ին:

Ի դեպ, երեկ դատարան էին ներկայացել Հովհաննես Թամամյանի գործով վկաներ Կարինե Շահինյանը, Կարեն Հակոբյանը եւ Արմեն Երիցյանը:

Մեղադրող Հարություն Հարությունյանը միջնորդեց, որպեսզի գործի նյութերին կցվի ՀՀ վերաքննիչ դատարանի փետրվարի 8-ի մեղադրական դատավճիռը: Այն կապ ուներ ամբաստանյալների հետ, քանի որ դատապարտվել են ազատազրկման Արամ եւ Արթուր Մարտիրոսյանները, Հրաչյա Պետրոսյանը:

Հովհաննես Թամամյանի պաշտպան Վաղինակ Գեւորգյանը պահանջեց այդ դատավճիռը, ասելով, որ այն անհրաժեշտ է իրենց դիրքորոշումն արտահայտելու համար:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

## Ամուսինը՝ պատգամավորի թեկնածու, կինը՝ ԸԸՀ նախագահ

Տավուշի մարզի թիվ 41 ընտրատարածքում, որի կենտրոնը Իջեւան քաղաքն է, դեռեւս մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ չեն առաջադրվել: Այս տեղեկությունը հայտնելով՝ թիվ 41 ԸԸՀ նախագահ Աիդա Սարգսյանը հաստատեց մեր այն տեղեկությունը, որ իր ամուսինը՝ Տավուշի մարզպետի տեղակալ, «Օրինաց երկիր» կուսակցություն Տավուշի մարզային կազմակերպության ղեկավար Վահե Վարդապետյանն այս ընտրատարածքում առաջադրելու է իր թեկնածությունը: Աիդա Սարգսյանն ասաց, որ ամուսինը ներկայումս առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերով է զբաղված: «Ամեն ինչ անելու եմ՝ մեր ընտրատարածքում ընտրություններն ազնիվ եւ արդար անցնեն»,- ասաց տիկին Աիդան:

Աիդա Սարգսյանը որպես ԸԸՀ նախագահ առաջին փորձությունը՝ 2012թ. նոյեմբերի 13-ին կայացած Իջեւանի քաղաքապետի ընտրությունը, հաջողությամբ է հաղթահարել, այդ ընտրությունները կայացան առանց խախտումների եւ բողոքների:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## «Նոր վետերաններին» մնաց մեկ քայլ

2011թ.-ի հունիսից ՀՀ-ում ձեւավորվել էր «Նոր վետերաններ» թոշակառուների մի խումբ: Նրանք ուժային կառույցների նախկին աշխատակիցներն էին, որոնք պահանջում էին, որպեսզի իրենց իրավունքները հավասարեցվեն Հայրենական պատերազմի վետերանների իրավունքներին: Ներքին գործերի նախկին աշխատակից, կենսաթոշակառու Հովհաննես Ռուշանյանի նախաձեռնությամբ գործն անցյալ տարի հասավ անգամ ՀՀ սահմանադրական դատարան, որտեղ վետերանները հաղթեցին: ՍԴ-ն փաստեց, որ տեղի է ունեցել ՀՀ միջազգային պարտավորությունների արգելափակում եւ որ ՀՀ կառավարությունն էլ «չի անդրադարձել իր որոշման ապահովմանը»: Խոսքը ՀՀ կառավարության այն որոշման մասին է, որը հակասության մեջ էր մտել «Հայրենական պատերազմի վետերանների» օրենքի հետ, մասնավորապես՝ «վետերաններ» հասկացությունը սահմանելիս: Այս պահին ՀՀ կառավարության նոր նախագիծն է ուղարկվել ԱԺ, որն ընդունվելու դեպքում, 1994թ. միջպետական համաձայնագրի 2-3 կետում նշված անձինք պետք է ներգրավվեն «Վետերանների մասին» օրենքի 1-ին կետում եւ այսուհետեւ օգտվելու են պատերազմի վետերանների բոլոր իրավունքներից:

Ռ. Մ.

## Պայմանագիրը՝ «ՎիվաՍել»-ի կետերում

Այժմ պետական մարմինների եւ կազմակերպությունների աշխատակիցները «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններից կարող են ձեռք բերել առողջության ապահովագրության պայմանագիր: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը՝ «Նաիրի Ինշուրանս» ընկերությունների համագործակցության շրջանակներում, «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի բոլոր սպասարկման կենտրոններում ՀՀ պետական մարմինների, ինչպես նաեւ կրթության, մշակույթի եւ սոցիալական պաշտպանության ոլորտների պետական կազմակերպությունների աշխատակիցներն այժմ կարող են ձեռք բերել առողջության պետական ապահովագրության պայմանագիր՝ ընտրելով առաջարկվող ապահովագրական փաթեթներից մեկը:

Պայմանագիրը կնքելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

* Պետական մարմնի կամ պետական կազմակերպության կողմից տրամադրված կտրոնը,

* Պետական մարմնի կամ պետական կազմակերպության աշխատակցի անձնագիր,

* Ընտանիքի անդամի անձնագիրը, եթե ապահովագրվում է նաեւ աշխատակցի ընտանիքի անդամը:

# Անջելինա Ջոլիի վարտիքից մինչեւ 500-ամյա գրատպություն

ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ այս տարի Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք է հայտարարվել, գլխավոր միջոցառումները կմեկնարկեն ապրիլի 23-ին՝ Գրքի ու հեղինակային իրավունքի միջազգային օրը: Նաեւ սկսել են ինչ-ինչ ակցիաներ իրականացվել գրատպության 500-ամյակի շրջանակներում: Արդյոք այսօր քարոզվո՞ւմ է գիրքը, եւ կա՞ համապատասխան մթնոլորտ, երբ Հայաստանի Հանրապետությունում հատուկենտ գրախանութներ են գործում:

Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի դասախոս, լեզվաբան, հայագետ Դավիթ Գյուրջինյանը իրավիճակը արտառոց է որակում: «Գրախանութ կարող է բացեն, բայց գնորդներ չլինեն, որովհետեւ նախ՝ մթնոլորտ պիտի ձեւավորվի, գրքի նկատմամբ սեր, ընթերցասիրություն պիտի ունենան մեծից փոքրը, փոքրից մեծը: Այդ ամենի բացակայությունն է պատճառը, որ գրախանութը փակվում է ու պահանջված չէ»,- ասում է լեզվաբանը ու հավելում, որ գրքի քարոզչությունը պետության մշակութային քաղաքականության առանցքում պետք է լինի: Նա ցավով փաստում է. «Տասնյակ բուհեր ու համալսարաններ ունեցող մայրաքաղաքը փաստորեն գրքի կարիք չի ունենում, չի խրախուսվում գրագիտությունը, կրթված մարդիկ պետք չեն երկրին, խաղատներ՝ որքան ուզեք, սրճարաններ, ճաշարաններ, խանութներ՝ նույնպես: Մարդիկ դարձել են առեւտրամոլ, իսկ խանութը մշակութային հաստատություն չէ: Օրինակ՝ «Էդիթ պրինտը» գրախանութ է բացել, բայց թաղամասեր ունենք, ուր գրքի հետք անգամ չկա: Փարիզում, Սենայի ափին գրավաճառ կրպակներ կան, մեզ մոտ գրախանութ մտնելու կուլտուրան էլ է կորել. եթե գիրք է պետք լինում, մարդիկ վազում են Երիտասարդական մետրոյի գետնանցում՝ գրախանութի սովոր չեն»:

Գրող-հրապարակախոս, «9-րդ հրաշալիք» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Վաչագան Սարգսյանը «Առավոտի» հետ զրույցում փաստում է. «Գրախանութների հանդեպ պետության մոտեցումը ոչնչով չի տարբերվում մշակութային մնացած հարցերի վերաբերյալ մոտեցումից: Իբրեւ պառճառ նշվում է այն, որ




պետությունն ավելի հրատապ խնդիրներ ունի լուծելու: Մինչդեռ նույն սղության պայմաններում էլ հնարավոր է ավելի որոշակի եւ դրական դարձնել վերաբերմունքը գրատպությանը, գրքին»: Գրողը զայրանում է, որ հեռուստատեսությամբ ամեն ինչ գովազդվում է, բացի գրքից՝ դա այսօր շահավետ չէ. «Հիմա ինչ ասես ցույց են տալիս՝ Անջելինա Ջոլիի վարտիքից բռնած մինչեւ Շակիրայի կրծկալը, իսկ ինչո՞ւ չի կարելի գրքի մասին խոսել: Ի վերջո գիրքը կրթական համակարգի մեջ ուրույն տեղ ունի, եթե մենք չենք գովազդում այն, ուրեմն չենք գովազդում կրթությունը, եթե կրթությո՛ւնը չենք գովազդում, գովազդում ենք ծանծաղ, մակերեսային, գողական, անբարո այն ամենը, ինչ ցուցադրվում է հեռուստատեսությամբ: Սրան գումարվել է նաեւ գրախանութների ջարդը. այնպիսի վիճակի մեջ դրեցին գրախանութները, որ մրցակցության չդիմանան կոշիկի կամ ներքնազգեստի խանութների հետ: Ախր գրախանութը ժամանակին մշակութային կենտրոնի նման մի բան էր, մարդիկ հավաքվում էին, որեւէ գիրք էր քննարկվում: Հիմա մի գրախանութ կա Սարյան փողոցի վրա, ուզում է եդպիսի փորձ անել, բայց դրա համար էլ ընդհանուր մթնոլորտ չկա: Ժամանակն է, որ պետությունը գրքին աջակցելու որեւէ գործառույթ վերցնի իր վրա»:

Բանաստեղծ Վահե Արսենի համոզմամբ՝ մի երկրում, որտեղ գլխավոր հեռուստատեսությունը ողջ օրը ցույց է տալիս անճաշակ եւ զոմբիացնող սերիալներ, խոսել Գրքի մայրաքաղաքից, անտրամաբանական է. «Գրքի մայրաքաղաքում խոսքը պետք է արժեք ունենա, մինչդեռ Երեւանում այսօր միակ եւ ինքնաբավ արժեքները փողն ու իշխանությունն են: Գիրքը հոգեւորի կրիչն է եւ նրա դեսպանը մարդու հոգում, ցավոք, այսօրվա հայաստանցին լիովին հեռացել է գրքից ու արվեստից առհասարակ: Նրան նախ պետք է վերադարձնել հոգեւորի աշխարհ, հետո նոր՝ Հայաստանի մայրաքաղաքը հայտարարել խոսքի եւ մտքի մայրաքաղաք, դրանից հետո էլ՝ գրքի»:

«Անտարես» հոլդինգի տնօրեն Արմեն Մարտիրոսյանի ձեւակերպմամբ. «Գրքի մայրաքաղաք միջոցառումը կամ այդ կոչումը կրելը օլիմպիական խաղերի անցկացման անալոգն է: Մինչ իրենց երկրներում օլիմպիադաների կազմակերպումը՝ պետությունները սպորտային խաղերի դեպքում կառուցում են մարզահամալիրներ, սպորտաձեւերն են զարգացնում: Եվ միջոցառումներն իրականացնելուց հետո այդ ամենը մնում է պետությանն ու ժողովրդին: Գրքի մայրաքաղաքի դեպքում գրեթե ոչինչ չենք արել: Ոչ էլ կառուցել ենք համալիրները, որոնք տվյալ պարագայում պետք է լինեին գրախանութների տեսքով»: Պարոն Մարտիրոսյանը նշեց մի շարք պատճառներ, որոնք չեն խթանում ընթերցասիրությունը եւ «խփում» են գրական մթնոլորտին, օրինակ՝ թեկուզ այն, որ երիտասարդների համար հաջողության հասնելու ճանապարհը ոչ թե իր գիտելիքն ու հմտություններն են, այլ քավոր-սանիկ-բարեկամ գործոնը, կաշառքը, գիրքը «ճկվել» է հարկերի ծանրությունից: Մեր զրուցակիցը փաստում է, որ Վրաստանը օրենքի ուժով կարողացել է նման բաներից ձերբազատվել, ու հիմա այնտեղ գրական «բում» է: Արմեն Մարտիրոսյանի խոսքով՝ գրական մթնոլորտ ունենալուց առաջ պիտի թարգմանչական մեծ աշխատանք տանել, ինչի հետ կապված մշակույթի նախարարի հետ համատեղ ծրագիր ունեն՝ աշխարհի 200 ամենամեծ գրողներին թարգմանել հայերեն: «Անտարեսի» տնօրենը որոշ դրական միտումներ էլ նշեց. մի դեղատնային ցանց եւ մի խանութների ցանց համաձայնել են իրենց սրահներում գրքեր վաճառել, մի բանկ թողարկում է կրեդիտ քարտեր՝ գիրք գնելու համար, մի ընկերություն էլ պատրաստ է Հայաստանի որոշ քաղաքներում տիպային գրախանութներ բացել: Բայց այս ամենի կողքին, Արմեն Մարտիրոսյանի ասելով. «Դասագրքերը գրախանութների միջոցով չեն տարածվում, դա բերում է նրան, որ հայաստանցի սպառողը, ծնողը չի այցելում գրախանութ, չի ծանոթանում վերջինիս նորություններին»: Նրա խոսքով՝ այսօր գրախանութ է մտնում ՀՀ քաղաքացիների 3-5%-ը, իսկ դեղատուն՝ 50%-ից ավելին: Սուպերմարկետների ցանցերից մեկը համաձայնել է գիրք վաճառել իր սրահներում՝ գրահրատարակիչների համար ոչ շահավետ պայմաններով՝ 300 հազար դրամ մեկ գրադարակ զբաղեցնելու համար, մեկ ուրիշն էլ ցանկանում է 100% ավելացնել հրատարակչի սահմանած արժեքին, այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիները սոցիալապես ոչ բարվոք վիճակում են: Արմեն Մարտիրոսյանը նշում է, որ կազմակերպություններից մեկը հայտարարել է, թե իր համար ավելի շահավետ է երշիկ կամ զուգագուլպա, քան գիրք վաճառելը. «Դա խոսում է այն մասին, որ եդ երիտասարդը չի ստացել կրթություն, չի շփվել գրքի հետ, այլապես չպիտի համեմատեր երշիկը գրքի հետ: Գիրքը միայն ապրանք չէ՝ հոգեւոր արժեք է: Այդ նույն սուպերմարկետը վաղը չի ունենալու գրագետ աշխատակից, որովհետեւ դիցուք 10 տարի առաջ չի վաճառել գիրք»: «Անտարեսի» տնօրենի ասելով՝ այսօր 82 պահանջված լեզուներից չունենք թարգմանիչներ, ու այդ հարցով նամակներ են ուղարկվել մշակույթի եւ ԿԳ նախարարություններ: Տարբեր երկրներ ֆինանսավորում են թարգմանիչների պատրաստումը, բայց ճանապարհածախսը եւ կեցությունը չեն հոգում, գոնե այս հարցում 2 նախարարությունները կամ կառավարությունը միջամտեն:

Արմեն Մարտիրոսյանն ասաց, որ երեկ էլ վարչապետի մոտ է եղել ու իր մի մտահոգությունը փոխանցել կառավարության ղեկավարին. «Այսօր շատ կարեւոր են էլեկտրոնային գիրք կարդացող սարքերը: Հասկանալի է, որ Հայաստանի միջին քաղաքացիները հնարավորություն չունեն գնել դրանք, բայց մենք ունենք պոտենցիալ 4 մլն սարք՝ բջջային հեռախոսները: Հարավային Կորեան ունի հրաշալի փորձ՝ իր քաղաքացիները բջջային հեռախոսներով կարդում են գրքեր տարբեր ծրագրերի միջոցով, սակայն Հայաստանում դա հնարավոր չէ: Մեր բոլոր քաղաքացիների սահմանադրական իրավունքը՝ շփվել իրար հետ հայերենով, խախտված է: Այսօր հայերեն sms հաղորդագրությունները մեկ բջջային հեռախոսից մյուսին հնարավոր չէ ուղարկել, օպերատորները այդ հնարավորությունը չեն տալիս: Սա ոչ միայն մշակութային վտանգ է, այլեւ Սահմանադրության խախտում եւ հանցանք»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Հոլիվուդյան Non-Stop՝ երեւանյան բուհերում

## Երիտասարդական նվագախումբը ամերիկյան կինոերաժշտություն կնվագի

Երեկ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար ու գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Քերին Ռոբլին հրավիրել էին մամուլի ասուլիս: Բանախոսները տեղեկացրին, որ այսօրվանից մինչեւ մարտի 27-ը Երեւանի 8 բուհերում կանցկացվի «Երիտասարդները երիտասարդների համար» համատեղ՝ «Hollywood Non-Stop» նախագիծը:

Սերգեյ Սմբատյանը նշելով, որ կայանալիք համերգները նշանավորում են հայ-ամերիկյան դիվանագիտական հարաբերությունների 20-ամյակը, մանրամասնեց. «Նվագախումբը հանդես կգա հոլիվուդյան հայտնի ֆիլմերի («Կնքահայրը», «Ռոմեո եւ Ջուլիետ», «Վեսթսայդյան պատմություն», «Մատանիների տիրակալը» եւ այլն) համար գրված Ջորջ Գերշվինի, Լեոնարդ Բեռնշտեյնի, Ջոն Վիլիամսի, Նինո Ռոտայի, Հովարդ Շորի եւ այլ նշանավոր դեմքերի երաժշտության մեկնաբանմամբ»: Քերին Ռոբլին էլ ասաց, որ այս համատեղ ծրագիրն ունի մեկ նպատակ՝ բարձրարվեստ երաժշտությամբ հայ երիտասարդությանը ավելի մոտեցնել եւ հաղորդակից դարձնել ամերիկյան երաժշտարվեստին: Բանախոսները վստահեցրին, որ այս ծրագիրը մտադիր են նաեւ ներկայացնել Հայաստանի մարզերում:



Քերին Ռոբլին եւ Սերգեյ Սմբատյանը ոգեւորված են հայ-ամերիկյան համատեղ նախագծով:

«Առավոտի» հարցին, թե կազմակերպելով հոլիվուդյան հայտնի ֆիլմերի երաժշտության փառատոն հայ երիտասարդների համար՝ նպատակահարմար չէ՞ր գտնում Արամ Խաչատրյանի, Առնո Բաբաջանյանի, Ավետ Տերտերյանի, Տիգրան Մանսուրյանի, Մարտին Վարդազարյանի, Յուրի Հարությունյանի եւ մյուսների՝ ֆիլմերի համար գրված երաժշտության միջոցով ամերիկացի երիտասարդներին էլ ծանոթացնել հայկական 87-ամյա կինեմատոգրաֆիային, տիկին Ռոբլին նախ փաստեց, թե ամերիկացիները ինչ-որ չափով, հիմնականում Սփյուռքի միջոցով, ծանոթ են հայկական ֆիլմարտադրությանը, հետո էլ հավաստիացրեց, որ իրենք ունեն նման մտադրություն:

Հայտնի է, որ աշխարհի բազմաթիվ երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ն, չունեն մշակույթի նախարարություն: Այդ դեպքում ի՞նչ սկզբունքով եւ ինչպե՞ս է իրականացվում մշակութային քաղաքականությունն ու այդ դաշտի կառավարումը: «Իմ երկրում մշակութային քաղաքականությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները կամ մասնավոր կազմակերպությունները»,- հակիրճ պատասխանեց Քերին Ռոբլին:

Լրագրողների հետ հանդիպման ընթացքում քանիցս նշվեց հայ-ամերիկյան համատեղ նախագծի հովանավորի անունը՝ «ՎիվաՍելլ-ՄՏՍ»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 15.03.2012

VivaCell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Լեւոն Ջուլֆալակյան. «Ռոման Ամոյանի հետ գոտեմարտում ադրբեջանցին փողոցի կռիվ էր անում»



Հունահռոմեական ըմբշամարտի Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Լեւոն Ջուլֆալակյանը երեկ «Պոստ Սկրիպտում» ծամուլի ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ գոհ է Եվրոպայի առաջնությունում իր սաների մրցելույթներից. «41 երկրների պայքարում մեր ընտրանին թիմային հաշվարկով զբաղեցրեց 5-րդ տեղը՝ նվաճելով 1 ոսկե եւ 2 բրոնզե մեդալ: Եվ եթե չլիներ Ռոման Ամոյանի գոտեմարտում խայտառակ մրցավարությունը, նա եւս կպայքարեր մեդալների համար ու մեր ընտրանին ի վիճակի էր նաեւ թիմային 2-րդ տեղը զբաղեցնել»:

Անդրադառնալով Ռոմանի եւ ադրբեջանցի Էլչին Ալիեւի գոտեմարտին՝ Լեւոն Ջուլֆալակյանն ասաց, որ այն տհաճ երեւույթ էր ամբողջ Եվրոպայի առաջնության համար. «Մրցագորգում ոչ թե հունահռոմեական ըմբշամարտ էր ընթանում, այլ ադրբեջանցու կողմից՝ փողոցային կռիվ, որն արգելված է ըմբշամարտի բոլոր կանոններով: Բոլորս էլ գիտենք, որ կա մրցավար, մրցավարական ժյուրի, որը պարտավոր է պատժել այդպիսի ըմբիշին: Բայց ստացվեց հակառակը: Հաշվի առնելով մեր մարզիկի ակտիվությունը, հնարքների գործողությունները եւ, ընդհանրապես, գոտեմարտի սկիզբը եւ ավարտը, հաղթանակն իրականում պետք է լիներ Ամոյանինը: Բայց տեղի ունեցավ հակառակը: Մարտից երեք վայրկյան առաջ մրցակցի մարզիչները բողոքարկեցին՝ պահանջելով իրենց ներկայացուցչին միավոր գրանցել: Եվ մրցավարներն այդպես էլ վարվեցին: Ըստ օրենքի՝ ես նույնպես բողոքարկելու իրավունք ունեի, ինչն էլ արեցի: Բայց գորգի մրցավարն ինձ դրա հնարավորությունը չտվեց, ինչը ՖԻԼԱ-ի օրենքների կոպիտ խախտում է, եւ ինձ դեղին քարտ ցույց տվեց: Այնուհետեւ, մրցավարները, հասկանալով իրենց սխալը, որ նման իրավունք չունեին, վերջում ընդունեցին մեր բողոքարկումը, բայց իրենց գործն արդեն արել էին: Ռոման Ամոյանը պարտվեց: Բայց այլ բան է, երբ պարտվում ես իրականում, այլ բան՝ երբ մրցավարների կողմնակալ մոտեցմամբ ես պարտվում: Բնական է, որ Ռոմանը չէր ցանկանում մոտենալ, որպեսզի մրցակցի ձեռքը բարձրացնեին: Դա տեւեց մի քանի վայրկյան, սակայն Ամոյանն, այնուամենայնիվ, մոտեցավ: Այսքանից հետո մեր ըմբիշը պետք է սպասեր ադրբեջանցու եզրափակիչ հասնելուն, որպեսզի ինքը 3-րդ տեղի համար պայքարելու իրավունք ստանա: Ադրբեջանցին նույն ձեւով, առանց միավորներ վաստակելու, մտավ եզրափակիչ եւ այնտեղ էլ հաղթող դարձավ: Սակայն այդ ընթացքում ՖԻԼԱ-ի նախագահ Ռաֆայել Մարտինետին մեր շարաբաստիկ գոտեմարտից հետո պատժեց մրցավարներին եւ կարգուկանոնին չենթարկվելու համար նաեւ՝ որակազրկեց Ռոման Ամոյանին ու նա չմասնակցեց հետագա պայքարին»:

Լրագրողների հարցին, թե հնարավո՞ր է, որ Ռոման Ամոյանը, որ Լոնդոնում մեր գլխավոր հույսերից է, այնպես պատժվի, որ օլիմպիական վարկանիշային մրցումներին չմասնակցի, հետեւաբար, օլիմպիական խաղեր էլ չմեկնի, Լեւոն Ջուլֆալակյանը պատասխանեց. «Մեկ շաբաթից կայանալու է ՖԻԼԱ-ի բյուրոյի նիստ, որտեղ էլ ամեն բան կորոշվի: Բայց չեմ կարծում, որ բյուրոն նման բան կանի՝ Ռոման Ամոյանի նման մարզիկին, որն իր քաշային կարգում աշխարհի լավագույններից մեկն է, զրկի այդ հնարավորությունից»:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# Սեր, տառապանք, խաբկանք. այս ամենը մեկ տեսահոլովակում



Օրերս կայացավ երգիչ Հայկ Կասպարովի «Սիրո տողեր» տեսահոլովակի պրեմիերան: Երգիչը հաճելիորեն զարմացրեց հեռուստադիտողին՝ ներկայանալով նոր ոճով եւ նոր տեսահոլովակով: Երգը, որի հիման վրա նկարահանվել է տեսահոլովակ, բալլադային ոճի է:

«Առավոտի» հետ զրույցում Հայկ Կասպարովը հայտնեց, որ իր երգի հեղինակը Մարինե Պետրոսյանն է, տեսահոլովակի ռեժիսորը՝ Գեորգի Հարությունյանը, իսկ օպերատորը՝ Կարեն Ստեփանյանը:

Նրա փոխանցմամբ՝ տեսահոլովակի նկարահանումները կատարվել են Դավիթաշենում գտնվող առանձնատներից մեկում, եւ տեւել է ընդամենը մեկ օր:

«Տեսահոլովակը «փշոտ» սիրո մասին է՝ սեր, տառապանք, խաբկանք: Երգն էլ լայնաշունչ ռոք-բալլադ է, էմոցիաների պոռթկում: Ես առաջին անգամ եմ նման ոճի երգ կատարում, ինձ համար սա նորություն էր: Նշեմ, որ շատերն են զարմացել, որ ես կարողացել եմ նման ոճում հանդես գալ: Երգի տեքստում կան շատ զգացմունքային տողեր, որոնք իրենց հետքն են թողել ձայնագրման ժամանակ...»,- նշեց Հայկը՝ հավելելով, որ արդեն որոշել է ընտրել ոչ թե հիթային ու պրիմիտիվ երգեր, այլ այնպիսիք, որոնք ցույց կտան իր վոկալ հնարավորությունները:

Երգիչը համոզված է, որ ինչպես իր մյուս երգերի դեպքում է, այնպես էլ այս մեկը կդառնա սիրված ու հիթային. նա նաեւ կարծում է, որ «Սիրո տողերը» հաջողված տեսահոլովակ է, բայց գնահատականներ տալը թողնում է հեռուստադիտողին: Նշենք, որ «Սիրո տողերում» Հայկը շատ կարճ սանրվածքով է, նոր կերպարի մեջ:

Ե. Հ.

## Հիշեցի հայ մեծերի գեղեցիկ խոսքը

Տարիներ շարունակ հայ բեմից հնչել է տաղանդավոր հայ դերասանների խոսքը, ականատես եւ ունկնդիր ենք եղել հիասքանչ դերակատարումների: Վերջին տարիներին շատ է խոսվում մայրենիի, մաքուր գրական լեզվի խաթարման ու ժարգոնի մասին: Հատկապես ավագ եւ միջին սերնդի ներկայացուցիչներս ոչ վաղ անցյալում հայ բեմի տաղանդաշատ վարպետներից լսելով ոսկեղենիկ հայերենը՝ այսօր դժվարանում ենք համակերպվել առկա վիճակի հետ:

Ո՞վ չի հիացել Փափազյանի, Ներսիսյանի, Ավետիսյանի, Ջանիբեկյանի, Աբրահամյանի ոչ միայն բարձրարվեստ խաղով, այլեւ մաքուր հայերենով, խոսքի հատուկ առոգանությամբ: Ուրախությամբ ուզում եմ փաստել, որ այսօր էլ ոգեւորվում եմ «Գեներալի աղջիկը» սերիալի գլխավոր դերակատարներ Արմեն եւ Աննա Էլբակյանների հիասքանչ խաղով, խոսքի վարպետությամբ, բարձր պրոֆեսիոնալիզմով ու գեղեցիկ հայերենով: Այդ շնորհաշատ դերասանները մեզ վերադարձրին վաղուց մոռացված մեր տաղանդավոր դերասանների շունչը:

ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
դաշնակահար, դոցենտ

## Հայազգի մերկապարուհին՝ «Luxury»-ի համար



Սերգեյ Զվերեւի ներշնչանքի աղբյուր, Վիտալի Կազլովսկու դուետի զուգընկերուհի Վարդան զարդարել է հայկական՝ «Luxury» ամսագրի շապիկը, հաղորդում է plitkar.com-ը: Երգչուհի, պարուհի եւ ֆոտոմոդել Վարդան վաղուց է զարմացրել իր անկեղծ լուսանկարներով: Այս անգամ էլ լուսանկարվել է հայկական ամսագրի համար: Հայտնի է, որ հայուհի Վարդան մինչ երգչուհի դառնալը ամենաբարձր վարձատրվող պարուհիներից էր, ինչի շնորհիվ էլ նրան անվանում են «Համաշխարհային մերկապարի հայ գեղեցկուհի»:

Ե. Հ.

## Էքստրասենսը չի ասել

«Առավոտի» փետրվարի 17-ի համարում տպագրված «Չկա ավելի մեծ մաֆիա, քան հոգեւորականությունն է» նյութից հետո խմբագրություն զանգեց հարցազրույցի հերոս, էքստրասենս Ռաֆայել Սարգսյանը եւ ասաց, որ այդ միտքը ոչ թե իրենն է, այլ հոդվածի հեղինակ, ԵՊՀ ուսանողուհի Մ. Սաքուլյանինը, եւ ինքը նման բան չի ասել: